Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԳԺԿ
ՀՐԴԵՀԱՇԵՋ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՏՐԱԿՏՈՐԻՍՏԻՆ, ԿՈՄԲԱՅՆԵՐԻՆ ՅԵՎ ՇՈՖԵՐԻՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԵՐՔԻ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

628.74
Հ-92

1940 թ.

14-110

17.05.2013

«Համ Կ(բ)Կ ԿԿ կուսակցական և խորհըրդային բոլոր կազմակերպություններից, ՄՏԿ դիրեկտորներից, խորհտնտեսությունների դիրեկտորներից ու կոլտնտեսությունների վարչություններից պահանջում է խստորեն պահպանելու բերքը հափշտակումներից և հրդեհներից»։

Համ Կ(բ)Կ ԿԿ 1935 թ. հունիսի 7-ի պլենումի ընդունած «Գյուղատնտեսական մթերքների մթերումների մասին» բանաձևից)։

ՀԱՑԸ ՄԵՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է,
ՊԱՇՏՊԱՆԻՐ ՆՐԱՆ ՀՐԴԵՀԻՑ

Гос. Публ. Библ. отдел ... ССР ... им. А Мясникяна

2980
40

04 AUG 2010

«ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել և ամրապնդել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային հասարակարգի սրբազան և անձեռնմխելու հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր և կուլտուրական կյանքի աղբյուր։

Հանրային, սոցիալիստական սեփականությունը վոտնահարողները հանդիսանում են ժողովրդի թշնամիներ»։

(ԽՍՀՄ Սահմանադրություն, հոդվ. 131)

1. Տրակտորները, կոմբայնները և ավտոմեքենաները կարելի յե բերքահավաքի համար գործածության թույլ տալ միմիայն վառելասարքերը և կարբյուրացիան ուշիուշով կարգի բերելուց հետո. խլացուցիչում կրակոցներ չլինեն և նրանցից ծուխ ու կայծեր չառաջանան

Բերքահավաքի համար գործածության թույլ չեն տալիս այն շարժիչները, վորոնց բակերը սարքին չեն և խողովակներից վառելանյութ ու յուղ ե մաղում։

Կոմբայնների մոտորների կարբյուրատորները, վորոնք զետեղված են մագնետոյից վերև, պետք ե պաշտպանված լինեն այնպես, վոր նրանց վրա վառելանյութ չթափվի։

2. Ավտոմոբիլների, տրակտորների և կոմբայնների վրա յեղած ամբողջ ելեկտրահաղորդաշտերը պետք ե լավ ամրացվեն և մեկուսացվեն։

Մոտորները պետք ե պահել մաքուր և աշխատանքի ժամանակ ծածկել կապոտներով։

3. Տրակտորների, ավտոմեքենաների և կոմբայնների արտախփիչ խողովակները պետք ե ունենան կայծմարիչներ։

4. Խողովակներն ու հացերը ավտոմեքենաների ու տրակտորների շիկացած արտախփիչ խողովակներից ու խլացուցիչներից պաշտպանելու համար, վերջիններս պետք ե ծածկել ազբեստաթիթեղից պատրաստած միջադիր ունեցող յերկաթե պատյանով, վորը պետք ե ամրացնել մետաղալարով։

5. Տրակտորներից, ավտոմեքենաներից և կոմբայններից թռչող, վառվող մրի մասնիկներից խուսափելու համար արտախփիչ խողովակները, խլացուցիչները և կայծմարիչները պետք ե այրուքից մաքրել։

6. Աշխատող յուրաքանչյուր կոմբայնի վրա, վորպես կանոն, պետք ե դնել մեկա-

կան կրակմարիչ և, բացի դրանից, պետք է լինի յերկաթե բահ։

7. Տրակտորների արտախփեչ խողովակները պետք է դարձրած լինեն դեղերի հակառակ կողմը—տրակտորների ստացիոնար աշխատանքի ժամանակ։ Այդ խողովակների վրա անհրաժեշտ է լրացուցիչ կերպով հագցնել հատուկ կերպով ծռված խողովակներ, վորոնք մտցված է ջրով լցված տակառի մեջ։

8. Ստացիոնար կերպով դրված տրակտորների մեջ վառելանյութ պետք է լցնել մոտորի աշխատանքը դադարեցնելով, կապոտը ծածկելով և ծապրի գործածելով։ Տրակտորներին վառելանյութ մատակարարել կարելի յե միմիայն մետաղե փակ բիդոններով, վորպես կանոն, չի թույլատրվում գիշերը շարժիչները սարքի գցել։ Բացառիկ դեպքերում կարելի յե սարքի գցել տրակտորային ֆարերի (այլ տրակտորի) կամ էլեկտրական լապտերների լույսի տակ։

9. Պատահաբար գետին թափված վառելանյութի վրա պետք է ուշիուշով ավազ կամ հող լցնել։

10. Արգելվում է վառելանյութ պահելու համար նախանշանակված փակ շենքերում «Զղջիկ» լապտերներ գործածել։ Խստորեն արգելվում է վառելանյութի ցիստերնների և տակառների ներսը լուսավորել այս լապտերներով, վերջիններս մոտեցնել բենզինի բակերին և այն դույլերին ու բիդոններին, վորոնք վառելանյութ տեղափոխելու համար են և այլն, ինչպես նաև մոտեցնել վառելանյութի ամեն տեսակի պահեստներին՝ 10 մետրից վոչ մոտիկ տարածության վրա։

11. Վառելանյութով լցված տակառները պետք է բացել հատուկ բանալիներով։ Արգելվում է տակառները բացել զուբիլով, մուրճերով և այլ գործիքներով։

12. Ավտոմոբիլների և տրակտորների մեջ վառելանյութ լցնել կարելի է վառելանյութի պահեստից վոչ պակաս, քան 10 մետր հեռավորության վրա։

13. Արգելվում է բաց կրակ գործածել վառելանյութի պահեստներում, մեքենաների մեջ վառելանյութ լցնելիս, ինչպես նաև գարաժներում, տրակտորային պարկերում, տրակտորների դաշտային կանգառներում։

14. Չի թույլատրվում կալում աշխատող մեքենաները (տրակտորները, ավտոմոբիլները և այլն) թողնել առանց հսկողության։

Կալի աշխատանքի ընդմիջումներին հսկողության համար պետք է հերթապահներ թողնել։

15. Տրակտորակալոնների ժամանակավոր (դաշտային) կանգառները պետք է նշանակել ծղոտներից և չոր խոտերից մաքրված տեղում, ամեն տեսակի շենքերից, կալերից, դեղերից և այլն, վոչ պակաս քան 100 մ. հեռավորության վրա։

16. Արգելվում է դաշտային կանգառներում տրակտորների մեջ վառելանյութ լցնել, յերբ նրանց մոտորներն աշխատում են. արգելվում է ծխել և բաց կրակ գործածել մեքենաների մեջ վառելանյութ լցնելիս։

17. Արգելվում է կալում ավտոմեքենաների և տրակտորների մեջ (այն տրակտորների, վորոնք ստացիոնար կերպով չեն դրված) վառելանյութ լցնել։

18. Հեղուկ վառելանյութերի փոխադրության համար նախանշանակված ավտոմոբիլներում շոֆերական կաբինների հետևի պատերը պետք է պատել յերկաթով։

Թլացուցիչը պետք է դուրս բերվի առաջ ռադիատորի տակ։ Այս դեպքում պետք է հաշվի առնել հետևյալը՝ արտախփիչ խո-

ղովակը պետք է դարձնել այնպես, որ նրա և շարժիչին վառելանյութ մատակարարող սիստեմի մեջև բավականին տարածություն մնա՝ ողափոխիչից ազատ կերպով ոդ անցնելու համար։

Փոխադրել թույլատրվում է միմիայն այն տակառներով, որոնցից վառելանյութ չի ժաղում և նրանք պետք է դրվեն խցաններով դեպի վեր դարձրած։

Ամառ ժամանակ տակառների մեջ վառելանյութ պետք է լցնել նրանց տարողության 95%-ի չափով, և նրանց պետք է ծածկել բրեզենտով, մեշոքի կտորով կամ ռագոժով և պետք է խստորեն հսկել, որ տակառները չժաղեն։

19. Արգելվում է վառելանյութով լցված տակառները փոխադրելիս ծխել։

20. Անհրաժեշտ է կոմբայնի շարժիչի գոլորշեցուցիչը լավ պաշտպանել, որ

նրա վրա ծղոտ, դարման և մղեղ չթափվի՝ գոլորշեցուցիչը փաթաթելով ազբեստով կամ թե նրան պաշտպանելով մանր ծակոտիկներ ունեցող ցանցով, այնպես, որ վերջինիս և գոլորշեցուցիչի միջև 5-7 սանտիմետր արանք մնա։

21. Պետք է այնպես անել, որ վառելանյութի խողովակների միացման տեղերից բոլորովին վառելանյութ չժաղի։

ԿԱՏԱՐԻՐ ՀԱԿԱՇՐԴԵՀԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՇԱՆՋԻՐ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՈՒՅՆԸ

Հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու համար, բոլոր հարցերով դիմեցեք հրդեհաշեջ հրահանգչին նրանից հրահանգ ստանալու կամ տեղական կամավոր հրդեհաշեջ խմբի պետին։

Ստախանովականներ, հարվածայիններ և սոցիալիստական դաշտերի առաջավորներ, անդամագրվեցեք տեղական կամավոր հրդեհաշեջ խմբին։

Ուսումնասիրեցեք հրդեհաշեջ գործը։ Հիշեցեք, որ տարվա բերքը կարող է մեկ ժամում վոչնչանալ։

Տրակտորների և կոմբայնների նորոգման ժամանակաշրջանում ապահովեցեք պարտադիր կարգով նրանց վրա հակահրդեհային միջոցառումներ անցկացնելը։

—Այն տեղերում, վորտեղ բերքահավաքի աշխատանք է կատարվում, կատեգորիկ կերպով արգելվում է ծխել, կրակ անել, լուցկի վառել, բաց կրակի կիրառումով վիրանորոգիչ աշխատանքներ կատարել շարժիչների և մեխանիզմների վրա:

Նույնպես արգելվում է մեքենավարների բուդկաներում ծխել:

—Աշխատանքների տերիտորիայում չի թույլատրվում փոքրահասակ յերեխաներին թողնել առանց հսկողության:

—Արգելվում է հրդեհաշեջ ինվենտարն ու սարքավորումը վոչ իր ուղղակի նպատակին ծառայեցնել, և այդ գործի հանցավորները կանչվում են քրեական պատասխանատվության (աշխատանքի պաշտպանության խորհրդի 1921 թ. մայիսի 4-ի վորոշումը):

—Անհրաժեշտ է ուսումնասիրել հակահրդեհային ինվենտարի ու սարքավորման կազմությունը և նրանց ոգտագործման միջոցները:

—Յեղեք զգոն: Հանրային սոցիալիստական սեփականությունը պահպանեցեք հրդեհներից:

—Սոցիալիստական բերքին հուսալի հակահրդեհային պահպանություն:

Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ
Հրդեհաշեջ Պահպանության բաժին

2980
40
Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР А. им. А. Мясникяна
ՀՀ Ազգային գրադարան
NL0280070

41 110

Գլխ. խմբագիր՝ Գ. Մանուկյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան

Գլավլիտի լիազոր Ս—310, պատվ. № 466 տիր. 2500.

Գեոհամալսարանի Հրատարակչ. տպարան, Յերևան